

**Կենսաբանություն, I ՓՈՒԼ
տևողությունը 90 րոպե
10-րդ դասարան**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Սպիտակուցի ո՞ր կառուցվածքն է առավել հեշտ ենթարկվում բնափոխման.

1. առաջնային
2. երկրորդային
3. երրորդային
4. բոլոր կառուցվածքները

2. Միաբջիջ ջրիմուռներին է պատկանում.

1. ուլտրափքսը
2. սպիրոգիբան
3. քլորելլան
4. մակրոցիստիսը

3. Բջջի ո՞ր օրգանոիդներն ունեն ՌՆԹ և ԴՆԹ

1. վակուոլները
2. միտոքոնդրիումները
3. էնդոպլազմային ցանցը
4. լիզոսոմները

4. Մեյոզի ընթացքում ձվաբջջի առաջացման ժամանակ մեկ օվոցիտից առաջանում է.

1. 4 ձվաբջիջ և ուղղորդող մարմնիկներ
2. 2 ձվաբջիջ և ուղղորդող մարմնիկներ
3. 1 ձվաբջիջ և ուղղորդող մարմնիկներ
4. 1 ձվաբջիջ

5. Հակագեն (անտիգեն) են կոչվում.

1. սպիտակուցները, որոնք չեզոքացնում են օտարածին մարմինների և նյութերի վնասակար ազդեցությունը
2. օտարածին նյութերն, որոնք ունակ են առաջացնել իմունային ռեակցիա
3. արյան ձևավոր տարրերը
4. ռեզուս գործոն անվանվող հատուկ սպիտակուցը

6. Քլորոպլաստներ են պարունակում.

1. ոլոռի արմատի բջիջները
2. որոճող կենդանիների լյարդի բջիջները
3. թթենու տերևի բջիջները
4. դժգույն պոզանկայի բջիջները

7. Մարսողությունը կարգավորող կենտրոնը գտնվում է.

1. միջին ուղեղում
2. ողնուղեղում
3. միջակա ուղեղում
4. երկարավուն ուղեղում

8. Բեղմնավորման էությունը.

1. գամետների կորիզների միաձուլումն է
2. քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմի վերականգնումն է
3. ժառանգական ինֆորմացիայի միավորումն է
4. սերունդների միջև կապի իրականացումն է

9. Ավիշը տարբերվում է արյունից.

1. լեյկոցիտների բացակայությամբ
2. գլյուկոզի բացակայությամբ
3. սպիտակուցների բացակայությամբ
4. թրոմբոցիտների բացակայությամբ

10. Բակտերիաները, ընդգրկվելով կենսոլորտում նյութերի շրջապտույտի մեջ.

1. մասնակցում են օգոնային շերտի ձևավորմանը

2. քայքայում են օրգանական նյութերը մինչև անօրգանականների
3. նպաստում են կրաքարերի առաջացմանը
4. չեզոքացնում են ռադիոակտիվ նյութերը հողում

11. Եզան երիզորդի զարգացման ցիկլում միջանկյալ տեր է հանդիսանում:

1. խոզը
2. մարդը
3. կատուն
4. խոշոր եղջյուրավոր անասունը

12. Թռչունների արտաթորության համակարգը ներկայացված է.

1. կոնքային երիկամներով
2. նեֆրիդիումներով
3. իրանային երիկամներով
4. կոյանցքով

13. Բջիջները, որոնցից բաղկացած է նյարդային համակարգը կոչվում են.

1. աքսոններ
2. նեյրոններ
3. դենդրիտներ
4. մեղիատորներ

14. Միաշաքիլավորների դասին են պատկանում.

1. խաչածաղկավորները
2. վարդազգիները
3. հացազգիները
4. մորմազգիները

15. Մարդու օրգանիզմում ածխաջրեջր կարող են.

1. պաշարվել գլիկոգենի ձևով
2. պաշարվել օսլայի ձևով

3. պաշարվել ցելյուլոզի ձևով
4. վերածվել սպիտակուցների

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ տարեկան օղակ կա 10-ամյա լորենու բնի հիմքում

17. Քանի՞ ամինաթթու է մասնակցում սպիտակուցի կենսասինթեզում.

18. Քանի՞ զույգ գանգուղեղային նյարդ է դուրս գալիս գլխուղեղից.

19. Քանի՞ զույգ քայլող ոտքեր ունի միջատը.

20. Քանի՞ սպերմիում է մասնակցում ծաղկավոր բույսերի բեղմնավորմանը